

Գրական Թերթ

ISSN 1829-1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐՄԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ ՀԱՅՐ

Ապրիլի 30-ին ՀԳՄ կյոք սրահում տեղի ունեցավ Աղասի Այվազյանի 100-ամյակին նվիրված գրական հանդիսություն: Աղասի Այվազյանի «Եղած չեղածը՝ մի կյանք» ինքնակենսագրական վեպից հատվածներ կայացրին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դերասան Սամվել Բաղինյանը և դերասան Սմբատ Ստեփանյանը:

ինչպես նաև հայ կնոջ խիզախության, վեհության և սիրո մասին է:

Գրականագետ, բ.գ.թ. Հայկ Համբարձումյանը հետաքրքիր գրականագիտական վերլուծություններ կատարեց Աղասի Այվազյանի ստեղծագործությունների մասին՝ ասելով, որ «նա որոնում էր մարդուն, մասնավորապես՝ հայ մարդուն, փորձում էր հասկանալ պատմական, հասարակական պրոցեսների հիմքը և ելք գտնել: Աղասի Այվազյանի գրականությունը խորքում կյանքի շարունակականության, հարմարվելու և այլ գաղափարներ ունի ու օգնում է ապրել»:

«Գրական թերթ»-ի խմբագիր



ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանն իր խոսքում նշեց. «Աղասի Այվազյանի 100-ամյակը նշելով՝ մենք նշում ենք մեր մտածողության, մեր արձակի աստիճանակարգերի մեջ մեծ դեր ունեցող գրողի հոբելյանը: Նա որոնում էր հայի էության խորհուրդը, խորհրդավորությունը: Ստեղծագործությունները գրականության, նկարչության ու կինոյի ոլորտում մոտեցնում են նրան վերածննդի մարդուն»:

Գրականագետ, բ.գ.դ. Պետրոս Դեմիրճյանը խոսեց Աղասի Այվազյանի գրականության, գրողի հետ ունեցած հանդիպումների ու հետաքրքիր գրույցների մասին՝ ասելով, որ «Աղասի Այվազյանի մտածողությունն ու ոգին տիեզերական մասշտաբների մեջ էին»: Պ. Դեմիրճյանը գրականագիտական վերլուծությամբ անդրադարձավ ինքնատիպ արվեստագետի ու գրողի ստեղծագործություններին, ուր «բառերը ստանում են բարձր, ոչ իրական իմաստ»՝ դարձնելով նրան հայ ոգու բեկորները հավաքողներից մեկը:

Արձակագիր, կինոգետ Դավիթ Մուրադյանը խոսեց Աղասի Այվազյանի սցենարներով նկարահանված ֆիլմերի մասին՝ նշելով. «Աղասի Այվազյանի վիպակները կարդալիս բոլորիս աչքի առաջ ֆիլմ էր ծավալվում: Թատրոնը և կինոն իր ներսում էին, դրա համար էլ նա ինքը հետո ֆիլմ նկարեց»: Նա առանձնացրեց հատկապես «Լիրիկական երթ» ֆիլմը, որը կովկասյան քառսի, թոհուրոնի, պատերազմի, կոիվների, տարբեր ազգերի խառնակության,

Կարինե Խողիկյանը խոսեց Աղասի Այվազյանի «Մանչերը» գրքի մասին՝ նրա վերլուծությամբ ամբողջացնելով գրողի ստեղծագործությանը բնորոշ առանձնահատկությունները և անդրադառնալով այնտեղ առկա համահայկական խնդիրներին: «Աղասի Այվազյանն իր ժամանակին հայի ինքնությունը որոնելու և գտնելու խնդիր էր դրել իր առաջ, ինչպես նաև՝ գտնելու պատասխանը. ինչո՞ւ է խեղվում մաքուր հայի տեսակը», - նշեց նա:

Գրականագետ Կարինե Ռաֆայելյանը խոսեց Աղասի Այվազյանի գրականության մասին և ընթերցեց հատվածներ նրա հետ ունեցած հարցազրույցից: Նրա կարծիքով՝ «Աղասի Այվազյանը տիեզերքը բյուրեղացրել և տեղավորել է մի մարդու մեջ»: Բանաստեղծուհի Գոհար Գալստյանը խոսեց Աղասի Այվազյանի ստեղծագործական յուրահատկությունների ու Գրականության և արվեստի թանգարանում նրա ունեցած փոքր հավաքածուի մասին՝ առաջարկելով համալրել այն:

Հանդիսությունը վարում էր արձակագիր Ալիս Հովհաննիսյանը: Նա խոսեց Աղասի Այվազյանի կյանքի ու գրական գործունեության մասին, ինչպես նաև՝ «Հայություն» թերթում համատեղ աշխատանքի, որի հիմնադիրն էր Աղասի Այվազյանը:

Հանդիսության ընթացքում դերասաններ Սամվել Բաղինյանն ու Սմբատ Ստեփանյանը ընթերցեցին հատվածներ Աղասի Այվազյանի ընտիր և ազնվաբույր լեզվով գրված ստեղծագործություններից:

Երկրագնդի այս մասում, ուր շարժումը առավելագույնի է հասել, ուր շենքերը միտում են դիպչել երկնքին, մարդկային այս խառնարանում դեգերում է հայաստանցի մի

Աղասի Այվազյան - 100

ունեցած ներուժի առավելագույն դրսևորումն է, և եթե մարդ այստեղ վերստին դժբախտ կարող է լինել, ուրեմն՝ դա

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏՎԱՅՏԱՆՔՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ*

Հարցական: Հարցականը թող հատուկ անուն դառնա, քանզի այն հայալեզու մտավորականի ամենաբնորոշ գոյավիճակն է այսօր:


մարդու ճակատագիրն է և ոչ թե համակարգի... մտում է դիմել միայն Աստծուն: Եվ տարբեր շենքերի մեջ, տարբեր ցեղախմբեր, տարբեր ձևերով այդ անուն են: Կաթոլիկ եկեղեցում, բողոքականում, սինագոգում, հայոց առաքելականում, այլազան աղանդներում...

Մարդը երջանիկ է, մարդը դժբախտ է, մարդը շքեղ ապարանքում է բնակվում, մարդը փողոցում մայթի վրա է կյանքն անցկացնում... Հոմերոսներ, գործարարներ, արվեստագետներ, միասե-

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՐԵՆԻՔ...

Ֆրիվելը՝ մեքենաների ազատ ճանապարհը, քաղաքի միջով, քաղաքից վեր, ճանապարհների վրայով Լոս Անջելեսի ամբողջ շրջանը՝ Գլենդել, Հոլիվուդ, Բրոքլան, Փասադենա, Սանտա Մոնիկա, Սան Ֆերնանդո և էլի ուրիշ վայրեր, հավաքում է մի քարտեզի մեջ:

Մարդիկ հիմնական ժամանակը մեքենաների մեջ են անցկացնում և մեքենաներով են հարաբերվում միմյանց հետ: Ոտավոր, երեի թե, միայն ես եմ՝ Հարցականը, որ նույնիսկ հանդգնում է դուրս գալ ֆրիվել՝ ի գարմանս չգարմացող ամերիկացիներին: Որքան էլ արագ շարժվեն մեքենաները, մարդիկ նրանց մեջ ճանաչելի են: Անգլիացիներ, գերմանացիներ, իտալացիներ, սևամորթներ, մեքսիկացիներ, հնդկացիներ, հրեաներ, չինացիներ, ճապոնացիներ և հայեր... Երբեմն մեքենայից մեքենա հանդիպում են երկու երևանցի ու բարևում միմյանց... Հայի գոյությունը բնական է դառնում այստեղ այլազան ազգությունների ներկայությամբ... Եվ մտածում ես մի նոր, ներդաշնակ աշխարհի մասին, որ իրականություն է դարձել, և ժողովուրդների համակեցությունը իսպառ վերացնում է ցեղային բնազդն ու մտածողությունը... «Լավ է, - հրապարակում էր հեշտ ոգևորվող Հարցականը,- խաղաղության պարտեզ, ժողովուրդների բարեկամության դրախտ, որի մասին երագում էր մարդկությունը դարեր ի վեր, և որի կոչն էին անում կոմունիստները... Լավ է, բայց ինչո՞ւ են նորեն հայերը այսքան ազգային միություններ, կազմակերպություններ հիմնել»...



նականներ. բոլորը մի շարժման մեջ են, մի երկնքի տակ, և այսպես ու այստեղ մտնում են 21-րդ դար: Մարդկությունը շարունակում է ապրել և բոլորում է իր նոր քաղաքակրթության շրջանը: Այն ամենը, ինչ հասցրել են ստեղծել այս մոլորակի վրա, Ամերիկան փորձել է հավաքել իր տարածքում... Ինչպես և ինչ ձևերով, դա լինելույան երկրորդ պարադոքսն է... Եվ Աստված, և սատանան ձեռք են մեկնել նրան... Գանդիի քանդակն է դրվել Սան Ֆրանցիսկոյում ի նշան այն սկզբունքի, որ չարը միայն բարիով կարելի է հաղթահարել: 70 հարկանի դրամատներ են խոյացել՝ այսականի ժպիտը թվերի և համակարգիչների մեջ: Բեթհովենի հուշարձանն է կանգնեցվել Լոս Անջելեսի կենտրոնում՝ ի նշան պատկառանքի՝ մարդու ստեղծագործելույան և նրա հոգեկան մեծալըջության: Նրա կողքին խաղաղ գոյակցում է իր գործն արած խոժոռ թնդանոթը, որի ձայնը հռնդացել է Բեթհովենի հնչյունների հետ զուգակցաբար, և որի հոգնած փողի մեջ դեռևս լսվում են սպանված մարդկանց տնքոցները: Այսպիսին է մարդկային քաղաքակրթությունը: Եվ լուսանջելեսյան այս մարդկային խառնարանը գուցե այդ քաղաքակրթության ծայրագույն փուլն է, որից այն կողմ չգիտես՝ ինչ է լինելու, ինչպես չգիտես շատ

Այս երկիրը երկու հարյուր քսան տարի առաջ ծնվեց, բայց նրա երկունքը սկիզբ առավ հունահռոմեական քաղաքակրթությունից: Սա մարդկության երկիրն է, որն իր ամբողջ կարողությունն ու փորձը կուտակեց, իրականացրեց այստեղ: Սա մարդկության մինչև օրս

----- բաներ մեծ տա-
ՍԿԻՉՔԸ՝ Էջ 1 բաժնության կամ
 բացարձակի մեջ:
 Պատմությունը տեղում չի դրվում, նա
 շարժվում է... (Այս պատի տակ պառ-
 կած տնանկներն արդեն այդ ճանա-
 պարհներն են բռնել դեպի երկինք
 ավելի կարճ ուղիով...) Թերևս հաջորդ
 փուլում մարդիկ սրբեր են դառնա-
 լու: Տա՛ Աստված... Սիրո շղթաներով
 միացած՝ կհասկանան միմյանց լեզու-
 ները: Թե մի նոր դեմոկրատական,
 ազատության խրախուսանքում մի նոր
 Բարեկրոն է առջևում... Աստված չանի...
 Բազմազգ կայսրությունները, բազմա-
 լեզու խմբավորությունները փլուզվել
 են. Բարեկրոն ու Մակեդոնացի, Հռոմ և
 Բյուզանդիա, վերջապես՝ ԽՍՀՄ-ը...

Կենտրոնական գրադարանի առջև
 դրված է ցայտաղբյուր, որը պատ-
 կերում է հռոմեացու շրջված գլուխ՝
 քթանցքերից և բերանից հոսող ջրով...
 Թերևս քանդակագործը բնագրա-
 յին զգացողությամբ գուշակել է երկու
 հազար տարվա քաղաքակրթության
 փախումը...

Եվ միգուցե ազգային գաղափարն
 է մարդկության բջիջը պահպանելու
 միջոցը: Գուցե այդ է պատճառը, որ
 այսօր՝ քաղաքակրթված Ամերիկա-
 յի համար վայրենի թվացող սերբերի,
 արխանգելների, քրդերի, արցախցիների
 պայքարը չի դադարում: Գուցե մարդ-
 կությունը պահպանելու համար հար-
 կավոր է պահպանել նրա բջիջը՝ ազ-
 գը, ազգային գաղափարը...

Լուս Անջելեսը հարց է առաջա-
 դրում՝ ընդհանրությունն է պետք, թե՛
 գատումը և առանձին օղակների ներ-
 դաշնակումը: Իսկ այս խառնարանն
 ինչ է բերելու...

Քուլտից դուրս են գալիս երեխա-
 ները և հանդիպում դրսում սպասող
 ծնողներին: Ճապոնացիներ են, մեքսի-
 կացիներ, չինացիներ... բայց չգիտեմ
 ինչ աննորմալության, ժառանգակա-
 նության, ցավի թելադրմամբ Հարցա-
 կանի սիրտը ճկվում է, երբ տեսնում է
 հայ՝ երեկվա հայաստանցիների երե-
 խաներին... Ծողովներից մեկի կոշիկնե-
 րը դեռևս «Մասիս» ֆիրմայի արտա-
 դրանքն է: Պահպանողական է նորա-
 ձևության հարցում, թերևս, այս մեկը...
 Բայց ամեն ինչ ամերիկյան է կամ մի-
 տում է դառնալ ամերիկյան: Մակայն
 հայկական ընտանիքը այնքան ներ-
 դաշնակ է տեղավորվել ընդհանուր
 բարեկեցության ստանդարտում, որ
 Հարցականի ուղեղի բոլոր խոռոչները
 սվաղվում են...

ԾՈՎԻՑ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ, Թե՛ ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ՕՎԿԻԱՆՈՍ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարցականի հայեցի ականջները՝
 ականորսի հատկությունն ձեռք բերած,
 արձագանքում են միայն հասկանա-
 լիին: Թեպետ Լուս Անջելեսը լեզվա-
 խառնարան է, իսպաներենը իր տակն
 է առել Բրոդվեյը: Եվ ոչ միայն փողոցն
 է խոսում, այլև սփռվում է մեքսիկական
 երգը, և ահագին երկնաքերեր ոչինչ
 անել չեն կարող իրենց անգլոսաքսոն
 հզորությամբ: Թվում է, ահա, ուր որ է,
 իսպաներենը պիտի ձայն տա վերին
 հարկերից, իսպաներենի արանքում,
 գոնե Բրոդվեյում, անգլերենն է պիք

տալիս... Չինարենն է տեղատվոթ-
 յան և մակընթացության մեջ... Ու այս
 լեզվախառնարանում երբեմն-երբեմն
 հայերենի փափուցն է Հարցականի
 լողությունը հասնում, մի տեղ՝ փոքր-
 ինչ բարձր, մի տեղ՝ որբավարի...
 Արևմտահայերենն ու պարսկահայի
 երկարաձգվող ձայնավորը, բաքվեցու
 ռուսերենը և, վերջապես, երևանցու
 խոսքը... Հայաստանցու խոսքը, պար-
 տադրված անգլերենի կողքին հայե-
 րենը նրա տնավարի գրույցն է, հոգու
 հանգիստը: Բայց խոսողների քայլը
 երկչուտ չէ... Երևանի «խառոչ» տղերքն
 են, որ Հայաստանի մի պատանոն են
 բերել Բրոդվեյ: Ամեն ինչից երևում է,
 որ նրանցից և ոչ մեկը հոմելեզ չի դառ-
 նալու, մուրացկանություն չի անելու:
 Կարելի է կանխատեսել, որ նրան-
 ցից ոմանք մեծ բիզնեսով կգբաղվեն,
 կմտնեն քաղաքականության ոլորտը,
 որտեղ աշխարհի բախտն է ուղղութ-
 յուն ստանում, որի մեջ է իրենց հայրե-
 նիքը, ավելի հասարակ՝ ծննդավայրը,
 և չեն մոռանա նրա մասին:

Նոր հայաստանցիների ճանփան
 ավելի կարճ է, քան առաջին գաղթա-
 կանների, որոնք փախչում էին օս-
 մանյան սրից, և երկար ժամանակ էր
 պետք, որ դուրս գային իրենց արյու-
 նոտ շապիկի միջից, կազմեին հա-
 մայք և հավաքվեին եկեղեցու շուրջը:
 Նորերը 88-ի շունչն են կրում: Սկիզբն
 ուրիշ է, ժամանակը՝ ուրիշ: Ճամփան՝
 մի այլ բանի համար: Նրանք գալիս
 էին նվաճված քաղաքակրթության
 կենտրոնը, և նրանց փախստական
 անվանելը մեղք է: Նրանք ինչ-որ բա-
 նով նման էին Ամերիկայի առաջին
 պիոներներին, որոնք ոսկու և ազա-
 տության համար էին գալիս, իսկ մե-
 րոնք, ավաղ, թերևս՝ բարեկեցության:
 Երևույթը բնական է, հասկանալի. ճա-
 պոնացին է այստեղ գալիս, և՛ գերմա-
 նացին, և՛ ֆրանսիացին: Եվ ազգային
 ամբիոնից դատափետելը կենսահաս-
 տատ բանականությունից դուրս է:
 Իհարկե, եթե չլինեք մի հանգամանք:
 Այդ հանգամանքի մասին երկմտանքը
 ես՝ Հարցականս, կառաջաբանեմ մի,
 ինձ համար բանաձևանման, մտքով:
 Հրեան քանդվում է արտաքնասպես՝
 ներսում պահպանելով իր անխմանա-
 լի ազգային խորհուրդը, հայը, պահ-
 պանելով իր արտաքինը, քանդվում
 է ներսից: Իսկ ներսում գտնվում է
 իր նախագույրը, որը իր պապերն են և
 իր երեխաները, թոռներն ու ծոռնե-
 րը, մեծ հաշվով՝ իսկական ինքը: Եվ
 միայն Մեծ Մարմնով կարելի է մտնել
 նեղ դռան միջով անվերջանելիություն:
 Լուս Անջելեսը, այս աղմկոտ փողոցնե-
 րը, այս առարկայական լիությունը ևս
 կվերջանան, երկնքի չափերով՝ շատ
 շուտ, և պետք կլինի այստեղից ևս մեկ-
 նել լույսի տիրույթ...

Բրոդվեյի ոսկերչական խանութնե-
 րի փայլի տակ մեծամասամբ հայեր
 են: Հուսով ենք, որ մամոնան կուլ չի
 տա նրանց: Քանզի գերեզմանը, միև-
 նույն է, փայլ չունի, և Աստծո մոտ ասե-
 ղի անցքով անցնելու հարկ չի լինի:

Հայությունը տակավին պահպա-
 նած հայերը և, հատկապես, նոր հա-
 յաստանցիները դեռ երկար ժամա-
 նակ պիտի կարոտախտից տառապեն,
 բնական է... Նրանց մի բան է մտում
 դեպի Հայաստան ճանապարհը (ես
 չեմ հանդգնում ասել անիրական բա-
 ոը՝ վերադարձ) հեշտ լինի և Հայաս-
 տան ասելու և կարոտելու փոխարեն
 հայություն ասեն և կարոտեն իրար:
 Ահա այստեղ է, որ ես ինձ մխիթարում

եմ ապագայի հարցով և ինքս ինձ, մի
 քիչ խեղճացած, մի քիչ ուտոպիայով
 տարված, նեղ վիճակից դուրս պրծնե-
 լու ճիգերով երկբայում եմ՝ «Ծովից ծով
 Հայաստան թե՛ օվկիանոսից օվկիա-
 նոս Հայություն»: Եվ ձեզ եմ ներկայաց-
 նում այս լավատեսական երկմտանքը,
 քանզի ուրիշ եք չունեմ, ես՝ ոչ քաղա-
 քական գործիչս, Հարցականս, որ իմ
 նախնիներից շատերի նման, հայկա-
 կան տառապանքի ծուղակն եմ ընկել
 և միջոցներ եմ փնտրում դուրս պրծնե-
 լու համար: Եվ որ այսօր հետապնդում
 եմ պարանոյա դարձած ցանկությունս,
 քանզի դա է միայն մտում իմ ուտոպիա-
 յի համար. հայը չպետք է քանդվի իր
 ներսում:

ՉՈՐՍ ՊԱՐԱՆՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՄԵՋ

Գյումրեցի մի նկարիչ, որ Լուս Ան-
 ջելես էր եկել դեռևս երկրաշարժից
 առաջ, և արտաքինով տակավին լե-
 նինականցի է մտում, հայկական հե-
 ռուստաթղթակցի այն հարցին, թե՛
 մտածո՞ւմ է Հայաստանի մասին, պա-
 տասխանեց. «Հայաստանը Աստված է
 ստեղծել, թող ինքն էլ մտածի Հայաս-
 տանի մասին»:

Պարարտ մարմնով մի ուրիշ տա-
 րեց հայաստանցի, որ պահակության
 պես մի գործ է անում Լուս Անջելեսում,
 մի այլ թեմայով խոսելուց հետո ցան-
 կացավ անպայման նշել, որ ինքը դու-
 տոր, պրոֆեսոր է... պետք է ավելաց-
 նել՝ սովետական համակարգում դար-
 ձած դոկտոր:

Ամերիկա են եկել նաև անձնական
 փառքի ետևից, Ամերիկա են եկել ար-
 կածախնդիրները նոր և հետաքրքիր
 կյանքի համար, Ամերիկա են եկել
 դուլարի ճառագայթների տակ տաքա-
 նալու... Վերդուգոյից մինչև Փասա-
 դենա ընկած տարածքում, և ոչ միայն
 այդտեղ, մշակված, կյանքի համար
 հարմարեցված է յուրաքանչյուր թիզ,
 յուրաքանչյուր միլիմետր... Աստվա-
 ծաշնչային այն խոսքը, թե՛ «Հոգս մի
 անեք ձեր կյանքի համար, թե ինչ պի-
 տի ուտեք և ինչ պիտի խմեք... Մոռիկ
 արեք երկնքի թռչուններին, որ չեն
 սերմում և ոչ էլ հնձում և ոչ ամբար-
 ների մեջ ժողովում, և ձեր երկնավոր
 Հայրը կերակրում է նրանց»... կարելի
 է իրագործել Լուս Անջելեսում: Ամերի-
 կան միակ երկիրն է, որտեղ կարելի է
 կերակրվել նույնիսկ գետնից... Եվ մեծ
 է գայթակղությունը՝ հոմելեզ դառնա-
 լու: Այսօր Ամերիկա են գնում հատկա-
 պես հայերը (նկատի ունենք ժողովրդի
 քանակի և արտահոսքի չափի հարա-
 բերությունը): Գալիս են ամեն կերպ:
 Զանգվածային եկավորությամբ, ըն-
 տանեկան արշավով... Գալիս են ինժե-
 ներներ, փաստաբաններ, նկարիչներ,
 դերասաններ և ամենից շատ՝ քաղքե-
 նիներ, մշտաբնակներ, որոնք կազմում
 են ազգի մարմինը (որոշ դերասաննե-
 րի ու արվեստագետների և կարելի է
 մոցնել այդ շերտի մեջ):

Երբ քանաքեռցի մանչուլը սկսեց
 գրադվել բոնցքամարտով, ես՝
 բոնցքամարտի սիրահարս, Աբովյան
 փողոցում, ամաչկոտ տղեկին ասա-
 ցի. «Դու չեմպիոն ես դառնալու»: Դա
 ոչ թե իմ մարզարեությունն էր, այլ՝
 Հայաստանը միջազգային մկաննե-
 րով տեսնելու երազանքը: Նա, հիմա,

դժվար թե հիշի մեր շատ վաղուցվա
 հպանցիկ գրույցը իր՝ փառքի դափնի-
 ներով, հիացմունքներով, առատ շեր-
 տադարավածքով կենսագրության մեջ:
 Նա դարձավ աշխարհի չեմպիոն և մեր
 պարծանքն էր ու գեղեցկությունը: Ար-
 ցախի ծանր օրերին, Երևանի բոնցքա-
 մարտի դպրոցի հիմնադիրն ու տնօրե-
 նը հայտարարեց, թե իր յուրաքանչյուր
 սան պատրաստ է պաշտպանելու հայ-
 րենիքը:

Վերջերս Գլենդելի հեռուստատե-
 սությանը հայտարարեցին, որ հայ
 օլիմպիական չեմպիոնը Լուս Անջելե-
 սում հիմնել է բոնցքամարտի դպրոց,
 ուր և հրավիրում է պատանիների:
 Վճարով՝ կարծում եմ: Ոչ մի վատ
 բան չկա այս երևույթի մեջ, բայց ես՝
 Հարցականս, ինձ մի պահ կողոպտ-
 ված զգացի: Ասում են՝ Լուս Անջելեսի
 Դատնիքաունը վտանգավոր վայր է:
 Ես գրոսնել եմ այնտեղ առանց որևէ
 վտանգ զգալու: Բայց այս հայտարա-
 րությունը մեծագույն վտանգը թվաց:
 Տրամաբանական ոչ մի բացատրութ-
 յուն, հիմք չունեմ դրա դեմ կամ կողմ:
 Նորմալ երևույթ է: Բայց ասես ինձ
 վրա հարձակվեց սիկլորների մի ու-
 մակ և տարավ ոչ թե դուլարներս ու
 հագուստս, ոչ թե կյանքս, այլ՝ մի ավե-
 լի կարևոր բան: Ինչ է, չգիտեմ... Չա-
 րենցը կասեր՝ աշխուժացավ «ուղեղիս
 մորմոքը»: Ավերվեց մի բջիջ, որ պայ-
 մանավորված էր նաև մի բոնցքամար-
 տիկով: Ենզիբարյանը, Թորոյանը
 և ուրիշ բոնցքամարտիկներ դուրս են
 եկել այն չորս պարաններով շրջա-
 փակված տարածքից, որ շինվել է կոչ-
 վում, ինձ թողնելով նրա ներսում, ուր
 պարանից պարան ենք գարնվում մի
 պուտ հաղթանակ կորզելու համար:

ՆՈՐԵՆ «ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ՕՎԿԻԱՆՈՍ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ»

Մակայն պետք է սթափ ուղեղով
 նայել եղելությանը: Ամերիկայից վե-
 րադարձ չկա... Հայ քաղքեմին այս-
 տեղ ամեն ինչ ունի՝ և՛ ծովափ, և՛ մեծ
 քաղաք, և՛ տաք կլիմա, և՛ ուտելիք և՛,
 ամենակարևորը, անվտանգություն:
 Այլևս կարիք չի լինելու ամեն ամառ
 Մոնթի կամ Գագրայի ծովափերը մեկ-
 նել, կարիք չի լինելու գնումների հա-
 մար Մոսկվա գնալ: Լուս Անջելեսում
 այս ամենը մեկտեղված է:

Ողջախոհ և իրագագ պետք է
 ընդունել ժամանակը և մեզ՝ այս ժա-
 մանակի մեջ: Նման երկընտրանք
 հայությունը երբեք չի ունեցել: Նման
 իրավիճակում հայությունը երբեք չի
 հայտնվել: Երկիր ստեղծելու այսօր-
 վա հնարավորությունը հայ ժողովուր-
 դը վաղուց ի վեր չի ունեցել: Շանս է
 տրված և՛ ստեղծելու ու նաև ոչնչանա-
 լու: Իհարկե, ոչնչանալ ոչ ոք չի ուզում:
 Ո՛չ անհատը, ոչ ազգը: Մակայն ես Լուս
 Անջելեսում ազերի չտեսա: Նրանք ևս
 այժմ հոծ գաղթականություն ունեն:
 Նաև չեչեն չտեսա:

Այն, որ մենք Սփյուռք ունենք, հա-
 յության գոյատևման երաշխիքն է: Պա-
 տահական չէ, որ 46 թվականի հայ-
 րենադարձությունը Հայաստանը վե-
 րացնելու նպատակով էր ծրագրված:
 Դրան պիտի հաջորդեր 49-ի՝ հայերի
 աքսորը ամբողջ Կովկասից: Գիտեին՝
 եկողը հայրենիքի կարոտից տառա-
 պողն է, ազգային գաղափարը կրողը,
 և Հայաստանը վերացնելու համար
 պետք է վերացվեր Հայությունը:

Բայց հաշիվները սխալ դուրս եկան, հասարակ ուղեղով դժվար էր կռահել հայության այսքան երկար ժամանակ ապրելու ֆենոմենը: Երբեմն մենք ինքներս ենք մեզ հարց տալիս՝ ինչու կանք և ինչպե՞ս է, որ կանք: Եվ պատասխանը տալիս է պատմությունը և ճակատագիրը՝ կաք և պիտի լինեք: Սա ծրագրված է ի վերուստ՝ ի հեռուկա մեզանից ոմանց և հուրախություն մեզանից շատերի:

Հայկական Լոս Անջելեսի գոյությունը և օրավոր մեծացող հայությունը վերստին մի նոր խնդիր է դնում ազգային գաղափարի առջև: Ինչ է ստեղծելու լուսանցելեյան հայությունը 21-րդ դարում: Սա մեր տեսակի, մեր անիմանալի խորհրդի հաստատումն է, թե... Կարելի է նաև հաստատման տարբերակով մտածել: Ինչ ինտելեկտուալ թափ ու ներուժ կարող է ունենալ հայկական միտքը այս՝ աշխարհի կենտրոն երկրում: Սա ոչ Պոլիս է, ոչ Թիֆլիս, որտեղ հայն էր գեղագիտական մթնոլորտ ստեղծում: Բրողվելու երկրորդ փողոցի մի բարձր շենքի ամբողջ պատը զբաղեցրել է իտալացի Էնթոնի Քուինի մեծ կերպարանքը: (Ամերիկայում պատերն էլ հաճախ կտավի տեղ են ծառայում): Այստեղ կարող էր լինել Վահրամ Փափազյանի պատկերը, որն ամբողջ հողագունդը ոտքի տակ տվեց և զարմացրեց աշխարհին... Որպեսզի այս պատերից մեկի վրա տեղ ունենար հայ արտիստը, իր երկրի հեղինակությունը պիտի լիներ աշխարհում կամ հզոր կենտրոն՝ Լոս Անջելեսում...

Այսօր կարելի է ունենալ և, մեկը, և մյուսը: Այսօր չափակշռվում է մեր արժեքը: Եթե չստեղծվի ինտելեկտուալ հայկական ուժ Սփյուռքում և ամուր կամուրջ հայրենիքի և արտերկրի միջև, ուրեմն՝ մենք գաղթականներ ենք լոկ և ոչինչ չարժենք... Եթե այդպես է, ուրեմն իմաստ ունի արդյոք պահպանել Հայաստանը իր շարունակական ծանր ճակատագրով և, պահպանելով Հայաստանի գոյությունը՝ չենք կտակում արդյոք նրա դժվար լինելությունը հետագա սերունդներին...

Եթե այդպես է, հապա ինչն էր պակասում Մոնթեին կամ, ընդհանրապես, հայերից շատերին, որ ձգելով ապահով կյանքը աշխարհի տարբեր մասերում՝ մեկնեցին անձուկ Հայաստան կամ բոցերի մեջ գտնվող Արցախ: Ինչ անիմանալի ծրագիր ունեն նրանք. հեռանկարով է, թե՛ պահի, շարժման արտահայտություն, ստեղծագործական մոլուցք...

Ես՝ Հարցականս, իմ ցեղակցից այսպիսի խոսք լսեցի. «Ես մի հայ եմ, որ ամեն անգամ այցելելով Լոս Անջելես և մշտապես այրելով Երևանում, Լոս Անջելեսը իմ քաղաքն եմ զգում: Եվ հայերից ոմանք, մշտապես այրելով Լոս Անջելեսում, երբեք չեն զգալու, որ քաղաքն իրենցն է: Ու ես կրկին կայցելեմ աշխարհի մի մաս իմ Լոս Անջելեսը՝ Նոյի իջած վայրից ու կրկին կվերադառնամ իմ Երևանը»:

* «Ամերիկյան աշարասնդալ», 1997թ.

Աելիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Գործերով գնացել էի ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի մոտ: Նա ասաց, որ գրաված է և պետք է հանդիպի դպրոցականների հետ, նրանց հետ շախմատ խաղա, և այդ աշակերտները ծանոթ են շախմատի մասին գրած իր գրքին:

Ես հիշեցի, որ XII դարում Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղան (կաթ. 1173-1193), որը գործել է Կիլիկյան Հայաստանի ու Մեծ Հայքի համար քաղաքական ծանր պայմաններում, իր ապրած ժամանակաշրջանի կյանքը պատկերել է որպես շախմատային (ճատրակ) խաղ: Խնդրեցի, որ Միլիտոնյանը շախմատի մասին գրված գիրքը նվիրի ինձ (նրա մտքով չէր էլ անցնում նվիրել): Գրքի առաջին իսկ գործը՝ «Պատմության շախմատ» խորագրով, մի առանձնակի ուժով ներգործեց: Սա անպամանորեն մեր օրերի բանաստեղծական մտքի լավագույն դրսևորում է: Նրանում բազմազան բանաստեղծը ներկայացրել է XXI դարի մեր օրերի քաղաքական տագնապները, որոնց հանգուցալուծումը դժվար է կռահել, և հուշում է, որ չի լինելու ի շահ փոքրաքանակ և իրենց անկախության համար ոտքի ելած ազգերի: Այդ խիստ ինքնատիպ և համընդհանուր խնդիրներ արծարծող պոեմում մարդկության ընթացքը պատկերված է շախմատի խաղատախտակի վրա:

Գրքի սկիզբը հայ շախմատային դպրոցի նշանավոր ներկայացուցիչ Ռաֆայել Վահանյանի «Անակնկալ գրքի ծնունդ» սեղմ նախաբանն է, որում ասվում է. «Այս գիրքն իր տեսակի մեջ նորություն է ոչ միայն Հայաստանում, այլև՝ աշխարհում: Հիրավի դիպուկ է ասված՝ լավագույն գրողը շախմատի արհարների մեջ և լավագույն շախմատի արհար գրողների մեջ» (էջ 3):

«Պատմության շախմատում» տեսնում ենք Մեքսիկայի ացտեկներին, Միսիսիպի Բարահունջը, դպրոցների Նեղոսը, Արայի սիրուց խենթացած Շամիրամին, դաշունահարված Հուլիոս Կեսարին, Ալեքսանդր Մակեդոնացուն, Գալիլեյին, Լեոնարդո դա Վինչիին, Ջուստին, Քրիստոֆին, Եհովային, Բուդդային, Մուհամեդին: Եվ, իհարկե, Նասր-լեռնին և ուրիշ հանրահայտ, աշխարհահռչակ դեմքերի:

Բանաստեղծը համոզված է, թե աշխարհաստեղծման յոթերորդ օրվան փոխարինել է ութերորդը, և այդ օրվա հետևանքն է, որ տարբեր դարերի մարդկանց հետ պատահելու է հետևյալը.

- Իսկ թագավորներն ու թագուհիները շնչում էին
- Նոր պատերազմի ահեղ աղոթքներ: Սևերի ու սպիտակների ճակատամարտն էր սկսվելու
- Ժամանակով խցված ժամացույցի հայացքի դեմ:
- Դա Աստուծո համար կայծակնային խաղ էր,
- Իսկ մարդկանց համար՝ հավերժական: (էջ 10)

«Պատմության շախմատում» հայտնվում են իսկական շախմատիստները, և նրանց մեջ են երկու հայերը՝ Տիգրան Պետրոսյանը և Գարրի Կասպարովը, անգամ վերջինիս մայրը՝ Կլարա Շահենովնան:

Խաղատախտակին պայթել ու անցել են երկու համաշխարհային պատերազմները, և սարսափելին այն է, որ

օդում կախված է երրորդ համաշխարհայինը.

- Հին վրեժը պիտոնի ուժով փայթափել է հին ազգերին: (էջ 18)
- Պատերազմի մարմաշը պարել է հարկապես՝
- Նավթի հորից գծված քաղաքագեղամիլիոնապիրոզը: (էջ 73)
- Եվ բանաստեղծը ցավով եզրակաց-

դառնա, որ մարդկությունը հիշի իրենց կորցրած Վանը: Խոստովանենք, որ նա հասավ իր նպատակին, բոլոր նշանավոր թանգարաններում նրա անվան տակ նշվում է նկարչի հայ լինելը, իսկ Մադրիդի ժամանակակից արվեստի թանգարանում 2006-ին ես տեսա նրա անվան տակ գրված նաև՝ Հայաստան, Խորգոմ ծննդավայրի անունը:

ԻՄԱՍՏՈՒՆ ԳԻՐՔ, ՈՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԺԱՄԱՆԱԿՅԱ ԱՐԺԵՔ Է



նում է, թե մարդկության պատմությունը՝

- Սպանությանց հանրագիտարան է: (էջ 20)
- Վերադառնանք XII դար՝ Կիլիկիա, լսենք, թե ինչն է տանջում այդ դարի հայ բանաստեղծին.
- Ի ժամանակս ասեն յերի Լինեն մարդիկ չար՝ ւ անբարի.
- Միրողը ոսկույ և արծաթի, Վառեալք ի սէր մամոնայի:
- (Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 89)

Միլիտոնյանի «Պատմության շախմատ, Շախմատի պատմություն» գիրքը յուրօրինակ ժողովածու է, որում բացի շախմատին վերաբերող պոեմից կան նույն թեմայով բանաստեղծություններ, էսսեներ, հարցազրույց, հատված «Վահագն Վիշապաքաղի արկածները» վեպից:

Գիրքն ավարտվում է «Ձիու քայլ» 2 գործողությամբ պիեսով և շախմատային խնդիրներով ու էտյուդներով: Վերջին այս երկու հատվածները նախատեսված են շախմատային որոշակի գրագիտություն ունեցող ընթերցողների համար:

Գրքում կան ճանաչողական կարևոր հատվածներ: Դրանցից մեկն է «Մեծն Տիգրան»-ը, որը հրաշալի ձևով ներկայացնում է աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի կյանքի պատմությունը: Այն կարելի է կոչել «Վարք Տիգրանի»:

Տիգրան Պետրոսյանը չարքառ գաղթական մշեցու զավակ էր, որ հայության անունը հնչեցրեց ողջ աշխարհում. «Մեծի առասպել դարձած փառքը, այս անգամ ոչ սրով, այլ հանճարով նվաճված աշխարհակալությանը, պարզևեց, որպեսզի երկրագնդի որ անկյունում էլ հայ լինի, պարզապես գոչի՝ ես էլ եմ հայ, ինչպես Տիգրան Պետրոսյանը»: (էջ 43)

Աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկին իր բրոզը՝ Վարդուշին գրած նամակներում հատուկ ձևով շեշտում էր, թե ինքն այնքան հայտնի պետք է

«Մեծն Տիգրան» էսսեն լույս է տեսել 1989-ին «Գրական թերթում»: Նրանում պատկերված են Երևանի տարբեր տարիքի քաղաքացիների մարդաշատ հավաքները Օպերայի և բալետի թատրոնի հրապարակում, ուր ցուցադրվում էր Տիգրան Պետրոսյանի խաղը: Հիրավի նա արժանացել էր իր հայրենակիցների պաշտամունքին: Ուշագրավ է, որ Միլիտոնյանը Տիգրան Պետրոսյանի հաղթանակները համեմատում է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու զարդաքանդակների հետ:

Ինքնակենսագրական տպավորիչ պատում է «Մեր սերնդի շախմատի տղերքը» էսսեն, որն սկսվում է ճշգրիտ նախադասությամբ. «60-ական թվականների ազգային ինքնագիտակցության զարթոնքի անկյունաքարերից մեկը Տիգրան Պետրոսյանի աշխարհի չեմպիոն դառնալն էր»: (էջ 45)

Միլիտոնյանը շախմատի դպրոցում սովորելիս մտերմացել էր Ռաֆայել Վահանյանի հետ, որը ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձել է աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն:

«Ցայտնտից դուրս գալով՝ չընկնենք ցայտնտի մեջ» էսսեն հրապարակախոսական բնույթ ունի: Գրողի մեծ ցավը Արցախի կորուստն է, որն ավարտվում է լավատեսորեն. «Եվ նրանց կուղեկցի Սասունցի Դավթի արձանը: Հիշենք Դավթին էլ սալերը փշրելով դուրս էր եկել թակարդ-փոսից»: (էջ 52)

Առողջ ու սթափ հրապարակախոսություն է «Քայլի արժեքը» հոդվածը, որում խոսվում է հայերի երամի ցրվածության մասին: Ցրված երամը տեղ չի հասնում: Մինչդեռ երկու հարևան թշնամիներ ունենք. «Աղբրեջանն էլ սավազ եղբոր հրահանգներով մերթ բացահայտ, մերթ նենգ ժպիտով ահաբեկում է հյուսիս, հարավ, արևմուտք, իհարկե չի մոռանում բարբառել խաղաղ համակեցությունից: Աշխարհի լոռայան համար նա սավթ և գազ է վաճառում»: (էջ 54)

Հատկապես դպրոցականների համար ուսուցողական է «Ինչպես սովորեցի շախմատ խաղալ» ակնարկը:

«Շախմատի մեջ եմ...» հարցազրույցից իմանում ենք, որ հիսուն տարուց ավելի շախմատն ուղեկցել է գրողին: Նա նույնիսկ ոչ ոքի է խաղացել աշխարհի V չեմպիոն Մաքս Էյվերի հետ: Անձամբ ճանաչել ու գրուցել է Գարրի Գասպարովի և նրա մոր՝ Կլարա Շահենովնայի հետ:

Գրքի բոլոր էջերից լսվում է շախմատասեր և շախմատի պայքարի տրամաբանությանը քաջ տիրապետող տղամարդու պատգամը՝ քաղաքականությունը նույնպես շախմատ է, և ուժեղ խաղացողը երբեք չի պարտվում:



ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ - 80

«Բանասարեղծը սկսվում է իր վերջին բանասարեղծությունից»:

«Մրեղծագործական պրոցեսն ինձ բազմաթիվ սրանչելի պահեր է պարզել, ... իսկ ընդհանուր պլանով՝ բանասարեղծությունը իսկապարել է բնական կյանքին, ...ինձ պահել է անվերջ կասկածների և երկմտության մեջ, միով-բանիվ՝ ասրել եմ «անկումների-ասրասփի» մղձավանջում»:

ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌ

Ես մենակ եմ ծառերիս մեջ,
Արմատներս լքել են ինձ,
Ուժ չեմ առնում այգուս հողից,
Ես մենակ եմ ծառերիս մեջ:
Օ՛, այգուս անց, իջիր նորից
Առէջներին իմ սնամեջ,
Ես մենակ եմ ծառերիս մեջ,
Արմատներս լքել են ինձ:

Իսնչ եմ շքեղ՝ այգուս վրա,
Իմ այգին իմ խաչն է կրում,
Ա՛յգն է վրաս ծառ նկարում,
Իսնչ եմ շքեղ՝ այգուս վրա:
Փայտփորիկը բան է գրում՝
Չանչը սրտիս վերքին դրած,
Իսնչ եմ շքեղ՝ այգուս վրա,
Իմ այգին իմ խաչն է կրում:

Ես չորս ստվեր ունեմ հիմա՝
Ձգված այգուս չորս ծագերից,
Իսնչափայտս մնաց ինձնից.
Ես չորս ստվեր ունեմ հիմա:
Սաղարթներս՝ բուն ձագերիս,
Որ ճախրեցին ծառից անմահ.
Ես չորս ստվեր ունեմ հիմա՝
Ձգված այգուս չորս ծագերից:

Ես մենակ եմ ծառերիս մեջ,
Իսնչ եմ շքեղ՝ այգուս վրա,
Ես չորս ստվեր ունեմ հիմա՝
Ես մենակ եմ ծառերիս մեջ:
Օրհներգեր են թափվում վրաս՝
Մանկությունս է տարփողում պերճ -
Ես մենակ եմ ծառերիս մեջ,
Իսնչ եմ շքեղ՝ այգուս վրա:

ԿԵՍԳԻՆԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ

Կեսգիշերային արվեստանոց.
Պատից պատ ձգվող սարդոստայններ,
Ու ես եմ սարդը:
Ներսում խավար է
[Դրսում խավար է],
Բայց կտափները, պատերից հակված,
Լուսագծերով կապվել են միմյանց:
Սարդի դին՝
Լույսից,
Իսավարից
Անդին:
Ու սարդը
Ես եմ:

ԱՄԱՌԱՅԻՆ ԱՆՁՐԵՎ

Ես չեմ մեռնի Փարիզում -
Բողբերը սեփականել է տարածքները վերջին:
Ես չեմ թաղվի Երևանում՝
Պանթեոնում Սովետաշենի
Սողը է սարսափելի:
Բոլոր խաչքարերը տաշված են:
Թափուր են միայն Չարենցի,
Տղերքի
Գերեզմանները:
Հարագատների շիրմաքարերը
Նմանվում են ծննդավայրիս անտառներին,
Ուր ամռանը չեն հալչում
Ձյունը և ձայնը հոգու.
Ո՛չ մի խաչի վրա
Չի դրոշմված մարմինս:
Եվ, ուրեմն, համբառնելու
Հնարքներս եմ մտաբերում:
Թափուր չի լինելու...-

Ես իմ երկնքից ցած կընկնեմ
Որպես մերձավորի արցունք:

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Ես դրամ կունենամ շուտով և շատ
Եվ կխաղամ, ընդհանապես, դերը
խաղամուլի,
Միայն թե գիտենամ,
Որ կմնաս ինձ մոտ,
Թեպետ տարիներով
Նյութել եմ հեռացումդ:

Ես խոնարհ կլինեմ շուտով և շատ
Եվ կխաղամ, ընդհանապես, դերը
աղերսողի,
Միայն թե գիտենամ,
Որ կմնաս ինձ մոտ,
Թեպետ տարիներով
Նյութել եմ հեռացումդ:

Ես մեղքեր կունենամ շուտով և շատ
Եվ կխաղամ, ընդհանապես, դերը
մեղանչողի,

Միայն թե գիտենամ,
Որ կմնաս ինձ մոտ,
Թեպետ տարիներով
Նյութել եմ հեռացումդ:

Եվ կունենամ ես ուժ՝ շուտով և շատ
Եվ կխաղամ, ընդհանապես, դերը
ուժասպառի,
Միայն թե գիտենամ,
Որ կմնաս ինձ մոտ,
Միայն թե չընկալեմ
Հեռացումդ:

ԽԱՎԱՐԻ ԽԱՂԵՐ

Օ՛, Խավարի թագուհի, կրկին եկար ինձ այցի,
Ու գիշերիդ հանդիման - անգեն ու գուրկ մնացի:
Մղձավանջը բերեցիր ու տեսիլքներ ցանուցիր
Ու ծանրացար դու վրաս - չմեկնեցիր ոչ մի ծիր:
Եվ ես պարտված ու լքված -
լույս ու մութում մնացի,
Օ՛, Թագուհի, հար - նման մթնում տրվող մի քածի:
Եվ ուղեղիս ծալքերից - քառսներս քամեցիր,
Դու թողեցիր, որ հոգիս հաժի, անհույս հալածվի:
Հազարադեմ տեսարան -
հազարաթև փարվեցիր,
Այգս մարեց քո ավիում - Դու իմ այգը մարեցիր:
Օ՛, Խավարի թագուհի, ինչ ես ուզում ինձանից -
Այգ կա - բան չի մնալու - ինձանից ու քեզանից:

Մենք միասին վերցրինք
Գիշերվանից այն ամենը,
Ինչ սահմանված էր հավերժության համար:
Ու այնպես արագ եկավ լուսաբացը:
Եկավ շղարշելու
Դողդողացող
Գիշերվա մերկությունը:
Մենք գիտեինք, սակայն,
Որ չի կորել ոչինչ:
Եվ կողոպտված գիշերվա
Խորհուրդները
Կշռայլվեն հոգնած
Մեր աչքերից՝
Բոլոր օրերի լույսերի մեջ:

ԵՐԳ ՀԵՌԱՅԱԾԻ

Ամենաչքնաղ արևամուտին
Կանաչ աչքերիդ ճիչը վերջին
Կանչում է ջինջ,
Ու հոգիս՝ հլու այդ դողանջին,
Անրջում է...
Ամենաչքնաղ արևամուտին
Ես արևին եմ ձոնում իջնող՝
Աղոթքս մունջ,
Ու բորբ կարմիրի կանաչն հալչող
Դողդոջում է...
Ամենաչքնաղ արևամուտին
Մի պահ տեսնում եմ աչքերը քո
Ու հնչում են՝
Հովիտներ, դաշտեր երգից անգո՛՛
Շշնջում են...
Ամենաչքնաղ արևամուտին
Կանաչ աչքերիդ ճիչը վերջին
Կանչում է ջինջ,
Ու հոգիս՝ հլու այդ դողանջին,
Անրջում է...

«Պոեզիան ամենավեհն է, ինչ Աստված փվել է մարդուն իր ոչ նյութեղեն բարիքներից: Թերևս դրանից է, որ ես պոեզիայի մահը նմանեցնում եմ մարտի դաշտում ընկած զինվորների զոհվելուն: ...Մենք արու մարտիկներ ենք՝ փոքրության, միջակության, այլասերության դեմ: Մենք մերավորականներ ենք, ուրեմն՝ ընդդիմություն չենք պարզապես: Մենք ընդվզում ենք նաև պերսության դեմ, եթե նա պերսականության կրողն ու սաարարողը չէ...»:

ՄԵՆԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Քեզ հանգիստ է պետք
Եվ ժամանակ: Երկիր:
Բայց ո՛չ թղթով հաստված
Հաղթայություն: Քեզ հին հունդերդ են պետք,
Անհուն հունդերդ են պետք
Եվ մաքրությունդ հանգստավետ:
Թե նայես ետ,
Թող քո ականջը չտագնապի:
Թող լցվի՛ Մասայաց լեռնակապի
Հովի աքրով:
Եվ քո աչքերից թող թոթափվի՛
Տեսիլքն ահի:
Ուղղիր հայացքդ ներաշխարհիդ,
Ցուլիդ ճակատը Որդան ներկիր-
Թող որ շերտերդ ցուլդ հերկի:
Օ՛, քեզ հանգիստ է պետք
Եվ ժամանակ: Երկիր:
Հողիդ ամրությունից,
Քարիդ համրությունից
Հունցիր կավդ կենաց:
Եվ անհեթեթ
Մահերդ ինձ ձոնիր.
Թող որ մահերիդ հետ
Առանձնանամ-կամաց:

«Պոեզիան իր մեջ կրում է ազգի բոլոր թաքուն ու անթաքույց տալանները, իդեալները, ըմբռնությունը, դժգոհությունները, արթնացումները, անկումները: Տառապում է բոլորից շար և կարողանում է այդ ամենը հանձնել թղթին: Միշտ պոետի ու հասարակության մեջ ներքին հակամարտություն կա, որովհետև պոետը խոսում է հասարակության ախտերի, ցավի, ձախողումների մասին... պոետի պարզամիտ գալիք սերունդների համար է»:

ԿԱՆՉԸ

- Կանչ է, եկեք:
- Կանձեր պատմության դասագրքերում Գլուխներ ապագայի մասին:
- Կանձեր երգերում տառապանքի և երջանկության սահմանագծերը խախտած անորսալի հնչյուններ:
- Կանձեր հոգիներում հայտնաբերված թաքստոցներ:
- Կանձեր հեքիաթներ մանուկների ու մեծերի համար:
- Կանձեր այքերում թշնամանքի թոչուններ, որ կտցահարում են սեփական մարմինները:
- Կանձեր երկրաշարժեր, որ կենտրոններ ունեն ձեր սրտի մեջ:
- Կանձեր լսողության հեռուներում տառապանքի ավազի շարժումները՝ անձրևներից փրկված, և լսում եք այսօր երեկվա քամու ձայնը:
- Կանձեր հայացքում արևի ութերորդ գույնի կտորտանքներ:
- Կանձեր շուրջը ձեռքեր, որ միայն ձեզ են պարզված:
- Կանձեր հիշողության մեջ երգեր, որ ավելի հին են, քան ջրի պաշտամունքը:
- Կանձեր տառապանքներում չափումներ, որոնցով զգում եք ձեր կյանքի տևողությունը:
- Եվ կանձ հիմա ձեզ պարզված ձեռքերը:
- Եթե կանձ՝ հիմա-Կանչ է, եկեք:

Լուս Անջելես հայաբնակ քաղաքում Մի տխուր հայ-հայացքներ է հավաքում: Կապույտ հայացք, Կանաչ հայացք, Սև հայացք- Որ օվկիանի անեզրություն են փակում: Լուս Անջելես հայաբնակ քաղաքում Մի ժպտերես յանկի-հայ է հավաքում,- Որ ուղտ բառնան, Երկանք աղան, Ու հայեր, Որ օտարի դուռ-լուսամուտն են թակում: Լուս Անջելես հայաբնակ քաղաքում Մի հայ վարպետ գաղթի դուռն է նորոգում- Որդու առաջ, Բախտի առաջ, Ու նրա-

Ով հանճարիս դեմքին դռներ է փակում: Լուս Անջելես հայաբնակ քաղաքում Մի տխուր հայ-հառաչանքս է հավաքում...

«...Ընթերցողը նկատել է այն ամենը, ինչ ես թույլ եմ տրվել: Պոեզիան բացահայտում է գաղտնիքներ և միաժամանակ թաքցնում է դրանք գաղտնաարողների իր մեկուսարաններում:

Ճշմարիտ պոեզիան գաղտնախոսություն- ենթապոռոչի արվեստ է, որն անպայման ի ցույց պիտի տրվի անթերի հնարքներով: Կողերի արվեստ է»:

Մա հուշ չէ արդեն: Ես անվերջ ուզում եմ լսել Քո անունը: Վարագույրը հուշի պատոված է, ինչպես հնացած առագաստ: Քամին մոլեգնում է, սակայն խարսխված է հնայված նավը - Ես լսում եմ Քո անունը - որ աստղային ուժով խարսխել է հոգիս: Տուր ինձ լեզենդի սրինգը: Ես ուզում եմ լսել հեքիաթների կղզու երգը... Առավոտյան, երբ նավագները սկսում են կարկաստել ոռկանները, Եվ երեկոյան, երբ լույսերը լքում են ձկների այքերը:

ԿԱՐՈՏ

- Ինչպես խուժեցիր, դռներս են բաց, Ո՞վ է քեզ հղել հեքիաթից հին, Գուցե անցյալում պահված մի կին Լուսինի սևեռեց այքերը թաց:
- Կարո՞տ, անցյալի պատգամավոր, Չեմ ոգեկոչել քեզ հողդին, Ապրել եմ՝ այքս հպած հողին, Չեմ սպասել քեզ և ո՛չ մի օր:
- Ինչպես խուժեցիր, դռներս են բաց, Ո՞վ է քեզ հղել հեքիաթից հին, Կարո՞տ, սիրելիս, դարձիր կրկին Ու սրբիր նրա այքերը թաց:

Դու նման չէիր Բանաստեղծության՝ Թույլ ձեռքով գրված. Դու նման էիր Մեծ ներշնչանքի՝ Ուրիշին տրված:

Դու նման չէիր Համաստեղության Իմ գլխին դրված. Դու նման էիր Մեծ ներշնչանքի՝ Ուրիշին տրված:

Դու նման չէիր Կանխատեսության Իմ ափին գրված. Դու նման էիր Մեծ ներշնչանքի՝ Ուրիշին տրված:

Դու նման էիր մեծ ներշնչանքի:

ԲԱԺԱՆՈՒՄ

Աստղերը... Ես այն պահին լքեցի նրանց, Երբ ընկավ քեզ վիճակվածը Ու մարեց մեր գլխավերևում:

Արևը... Այն այնքան շատ էր լինում մեզ հետ, Որ վաղուց արդեն մոռացել եմ Նրա գույները:

Տիեզերքը... Ես ամուր գոցել եմ իմ այքերը, Ու երկու փոքրիկ, կապույտ պաստառները Ծածկվել են տառապանքի խավարով:

Եվ դու լքեցիր ինձ-- Ու մնացի կոպերիս ծանրության տակ Այսպես մենակ:

ՃԵՐՄԱԿ ԲԱՅԱՏ

Հովին ձայնն է... ԻՆՏՐՈ

Անտառակն է մերկանում - կնոջ նման անառակ - Ինչպես այգին Ձիթենյաց՝ մեղքի քամուն ընդառաջ, Եվ հնազանդ մի տերև Դեռ արև է թաքցնում:

Օ՛, այս աշունը պատիր և ձմեռվա շուրջ՝ պանդ, Էլ անբաժան են, ինչպես ասեղնաշարը շալից, Եվ հնազանդ մի տերև Դեռ արև է թաքցնում:

Ձնաճերմակ սավաններ, որտեղ որ է՝ կրացի Մերկությունը բնության՝ ընդերքները կանացի, Եվ հնազանդ մի տերև Դեռ արև է թաքցնում:

Կնոջ նման անառակ - անտառակն է մերկանում, Արագությամբ սարսուռի ճերմակ բացատն է բացվում, - Եվ հնազանդ մի տերև Դեռ արև է թաքցնում:

Ալեքսատրի նման ճերմակ Քո մարմինը Կհամբուրեմ Հազար անգամ:

Կհուրհրա կիրքը պուրպար, Ինչպես կրակ ձյունների մեջ, Ու սատնությունն անծայրածիր Ու անձանոթ այս աշխարհի Կմշուշվի շիթերի մեջ Ազահ ու տոթ Մեր այքերի, Համբույրների Ու ճիչերի:

Ալեքսատրի նման ճերմակ Քո մարմինը կհամբուրեմ հազար անգամ, Ու արյունոտ ակնթարթում Կըմպեմ մարդուն տրված վայելքը գերագույն:

Անմահությունը պատիժ էր դաժան:- Արդեն քսան դար Գամված եմ հողին, Եվ ահա, հիմա, Շնորհապարտ եմ ես Արարողին - Առագաստս բաց- Ինձ վեր է տանում: (Գաղտնիք պիտ պարզեմ՝ այդ ինչ են անում Մեռյալներն այնտեղ, որ համառորեն չեն վերադառնում): Գաղտնիք պարզելու Պահ հրաշալի, Եզակի պահ է - Ես պիտի մեկնեմ:



Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊՈՆՁԻԱ – ԷՍՍԵ

ԼԾՈՐԴՈՒՄՆԵՐ

1. (անկենդան գոյ)

Մահը կյանքի փրամարանական շարունակությունն է: Էոնեսար Հեմինգուեյ

Բանաստեղծությունների փնջով այցելեցի գերեզմանին. անխնամ էր, ու խոտերը չորափշուր ծեծված էին ներբաններով անցորդների...

Մի հոգնաբեռ վերացումով նայեցի ես իմ հերթական հանգրվանին՝ մեկ աչքս փակ, մյուսը՝ կլոր (ասես Կորուսբուսի հեռադիտակ), և գալիքի ուրվանշույլ պատրանքի մեջ

ինձ զգացի հողմահարվող մի ավարա՝ հեղզ, երերուն, ում շարունակ վերն ու վարը, աչն ու ձախը վխասել են ու բորբոքել հանապազօր կտոր հացով տենդն ուղեղիս, ինչպես հորդոր՝ իբր տեղդ անտեր թողած՝ իզուր ինչ ես դու չափչփում այլ վայրերում, երբ շոայլդ ժլատ է քո նկատմամբ:

2. (շողարձակահերթ)

Դու ասացիր. «Բանաստեղծություն ինձ դարձրու»: Կարկամեցի՝ արդյոք մեջս այդքան սեր կա, որ Աստծո նման քեզ արարեն անձեռակերտ ու հեղակարծ վիթը տեսած որսկանի պես չկրակեմ...

3. (29. 12. 2023 թ. Հայաստան)

Անդրբևեռի ցածր երկնքում տեսել եմ պաղ հյուսիսափայլը ու շլացել: Հյուսիսափայլը հիշեցնող տոնածառերի լույսերի առատությունից ինձ են նայում արցախուհու աչքերը, որոնք ասես բարբառում են Մարինա Ցվետակայի նման. «Ես չեմ հոգնել ապրելուց, Ես դադարել եմ ապրել»: ...Ու շիվել եմ կողմնորոշումս կորցրած անպատասխանատու մեղավորի պես:

4. (վերընձյուղում)

Տխրադարով թոթովեցիր. «Որո՞նում եմ անունս,

որ կրել եմ ինը ամիս աշխարհ գալիս: Ինձ չեն օգնի»: Ջարմացա, որ տվայտանքդ դարձրել է քեզ հեռուների ու մոռացել պրպտումը տողերիս մեջ: Երկնահնար մոգի նման գաղտնածալքից ջինջ բառերիս հանում եմ մի դափնու տերև՝ հավերժահարս՝ Ապոլլոնի անհագ հոգու համն ու հոտը, արև-քունքի փառազարդը, և աղոթքիս վառվող մոմով ընծայագրում՝ ԴԱՓՆԵ:

5. (Հայր - ես)

Իմ ձեռքով եմ տնկել ռուսական եղևնին, որի արմատներն անհոգաբար խարխլել են հորս մահարձանի հիմնատակը, թեքել նրան, սովերաքողել նվիրումս տազնապով:

6. (սկանչող կանչի Նյույորն)

Հայաստանում այսօր ամենաեժան միրգը խնձորն է, իսկ խնձորենիների տակ օձեր են սողում:

7. (բարեգթություն)

Խաղ-աղ-ուրյուն բառն այնքան ծամծմվեց իմ շուրջը բոլոր, շողը դուրս սովեց. նետվեցի Լիլոյի հրուշականոց, մեղրածալիտ տիրուհին աղափսայույս մատները սահեցրեց ուսիս... ...դողս ընդվզեց. «Ձեռքդ հեռու տար, տիկին...»: Նա թե. «Մարդոստայն վերցրի վրայիցդ, ծերունկ»: Ոնց մտել էի, այդպես դուրս թաա ու ինձ զցեցի քամու բերանը, քամին ինձ սուլեց, և ժամ-(ավ)անակի խաղը կանգ առավ:

8. (ամենասպուն)

Մարիամը հոգուց Աստծուն մարմնացրեց, իսկ դու՝ գրիչս...

9. (իրական)

Մեկն անհանգստացնում է ինձ իր քար լռությամբ. ամեն գիշեր զանգում երազիս ու ձայն չի հանում, իսկ ես «Աստծու առավոտ» ծորակի ջրին պատմում եմ տեսածս երազը՝ նրա զանգի ընդհատումից մոզոնված:

10. (սկամա)

Ծիծղուն օրը առավոտ կանուխ բարենաղթեց. «Բայդուշությունդ պոեզիայիդ վրա թափիր»: Ու ես գրեցի. «Ասում են՝ եղբայրը եղբոր մահը չի ուզում, բայց մենք ինչպե՞ս Արցախը թողեցինք մահվան հետ մենակ»:

11. (կա ու... կա)

Ժամանակի պաղ ապակին չի խամրեցնում վարդի շիկնանքը, որ մեր տեսությանը ցնծացող այտերիդ գույնն ունի, և չի մարեցնում նրա հոգու դողանքը տաք, որ մրմունջիդ արձագանքն է՝ վարդի թերթերին հավոդ հովիկ:

12. (տիրաբանում)

Իմ հեռանալը ընդամենը բաժանումիդ չափն է, ես շնաբար չեմ, որ հաղթահարեմ ժամանակն ու տարածությունը ինձնից ու քեզնից անկախ, իմ հեռանալը երկնքում նույն ճախրն է, որը խփվել է (ծիծաղելի է ասել) քո հազար տարվա «փեչի» կաչանի բոցիկից:

13. (մակագրություն է-ով ճեղքված օրվա երեսին)

Աչքերդ՝ Աստծո թաշկինակներ, բացուխուփ անելով մաքրում են հոգուս շոգեղյամը պաղ օրերի: Դու ասում ես. - Ինչո՞ւ իմ մասին երբեք չես գրում: - Ես, ես ինչ գրող, պարզապես նշադրում եմ կյանքը ճերմակին, ինչպես որ հիմա քո աչքերի մնջախաղն եմ պոկում երրորդ կուպիցդ ու փոխադրում թափանցիկ, շատ թափանցիկ արշալույսի չախկալ շողերին:

14. (պոեմ քնարական)

Գարունդ աչքերս բացեց, քեզ գտա ցուլքում բիբերիս, ամառն ինձ արևով օձեց, դու աշխետ հովիկ ես սովերիս, աշունը գույներս վառեց, որ քեզնով թաց կավս թրծի, ձմեռն ինձ խև պապիկ կարգեց, իսկ քեզ՝ հույս, ձյունանուշ-մարի:

15. (սեղ դռան միջով)

Խաղաղ բան է մեծ քաղաքի բանուկ փողոցով քայլել աննշմար, երբ ողողվում ես անցորդ ժխորով ու աչքով ծավի տնտղում ամենքին Աբու-Լալայի սուրահների պես մեկիկ առ մեկիկ, և քաղցր բառ է քո մեջ ընդվզող այո-մերժումը, երբ էությունդ պինդ աքցանել է սապատավոր չ-ն, իսկ դու ապրում ես քո մենախաղը հոգուդ հայելում՝ ներբաններիդ տակ անտարբեր ճզմած զնգուն արծաթե դրամներ պես-պես:

16. (մթնոլորտից վար)

Չեմ հավատում այլևս հրաշքներին, արևը չղջիկի պես սպասումից կախվել է գլխիվայր, ո՞ւմ խուլ ոտնաձայներն են մարում, և զուր է կարծես կարոտում ձայն դարձած ակնկալումը. -Ինչո՞ւ է ինձնից հեռանալուդ հրաշքը...

17. (կյանքի ծարավը)

Աշխարհի հանած փոշին պաշարված արցախցին է ծամում: Էմիլ Զոլայի «Ժերմինալում» ռուս Մուրավինը ծովի ջրերով հեղեղեց հանքահորը,

ուր սոված ածխահատներ էին: Մոքերս հարահոսում են ու բվվում. «Արցախցին ինչ կապ ունի ածխահատների հետ»: Ես էլ ասում եմ. «Կապը նրանց միջով անցնող կարմիրն է, որ դառնում է դիրիժորի ձեռքի փայտիկ»:

18. (շեղում)

Ժամապատերին զարկվող քո վազքը բեկեց լույսդ արյանս կարմիր ցնորքում, ուր թափառ աչքերիս շատ բիբերում վախ կա, ծեծված, մրրկված ծերուկի խրատ-հորդոր. «Արագ քայլող կնոջ կողմը չեն նայում: Թե շոռաչք ես, հետևիր ճեմողին, հյուսիր նազանքը նրա ու մոռացիր հազար ու մեկ ճիշտ ու սուտ, քանզի մտքով ցանկալն էլ երանություն է»:

19. (կուրորակված առօրյա)

Օրը՝ խեղված կատակ, խաղով խաղք, նազարների ցուփ խնջույքին «Մարտիկի երգը»՝ նախուտեստ, ներկա են հավեսին դիվան-բաշիններ պես-պես, դիվան-ագե (ն)տներ հրկեզ, որ արցունքի կաթիլը հանց աստղիկ նոր կոչումի օղու գավաթով կոնծում են, չէ՛, լակում են «Էրեխտի» սուրբ կենացը մինչև վերջ, քանզի այս նեո աշխարհում «ինչ անում են հայրերը, նրանց համար են անում»: Թախծոտ բխում է մեկեն երգը փրփուր ռուսերեն. «С чего начинается Родина», ու ժամանակը մզլոտ դառնում է կարմիր բորբոս, որից ելնող մի ձեռք շոշափում է գլուխներ, ինչպես անում են հաճախ ձմերուկներ ջոկելիս, և տարածվում է անկապ խորքից եկող խորխոտ հագ. «Հայաստանում, բնում, բնում հո՛, դեռ սովեա է, բնում, բնում հո՛... խեղճ ու մոլոր հայերը ձեռ չեն քաշում սիբիրի սառցելույա ծծակից»:

20. (սալափնում)

Քաշում եմ մտքիդ ոսկեթելերը, կարում պատոված կտավս, դու ծիծաղում ես. «Ա՛յ հնակարկատ, դրանք շքեղ հանդերձի համար են»: Իսկ մի աննշմար թոչուն սիրտս է կտցում. «Հոգ մի՛ անի, հոգի՛, կա՛ արդյոք ավելի վե՛ն բան, քան բուժվածը՝ սպին, որ ճակատագրի փշե պասկն է:

21. (ուրևնն այսպես)

Ես տրտնջացի. «Լուսանցքում եմ»: Մխիթարեցին. «Այնտեղ է կյանքի սրբագրված ճշմարտությունը»: Հեզնեցի. «12 թերթանի տետրակի 13-րդ էջն եմ՝ ծծանը»: Ինձ սփոփեցին. «Ախր չգիտես՝ որքան կապտանախշ ես դու», Համառեցի. «Աշխարհ եմ կորսված», Ասացի. «Հոգ մի անի, արձանների ճաղատ գլուխներին մաքրեմաքրու աղափսիներն են իրենց պետքերը հոգում:

IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



...ԻՍԿ ԳԻՐԸ ԿՄՆԱ, ԻՆՉՊԵՍ ՉՅՈՒՆՆ ԱՐԱԳԱԾԻ

Դարձյալ ուշացանք. հասկանալով հանդերձ, որ լավ չի գգում ինքնեք մեզ հույս տվեցինք ու հաստատ որոշեցինք դիվանագիտական հարաբերությունները փոխելու: Զրուցելու Արագածի լանջերին վստահորեն թիկնած Հնարավոր գյուղացի մանկության «հրեղեն ձիով» մի օր մայրաքաղաք Երևան եկած ու պետհամալսարանում հայրենի եզերքին ամեն օր կարոտելով առաջին սիրուն ակնարկները գրող երիտասարդի չխամբող երազանքների մասին:

«Հայրս Մեծ հայրենականի հրդեհներից փրկվել-վերադարձել էր և կարտոֆիլի բանջարանոցում իբր առողջ մի ձեռքով փորձում էր բահն աշխատեցնել և փոխել ջրի հունը: Ես՝ տասը տարեկան տղա, տանիքում խոտի դեզի մոտ, հարմար անկյուն գտել ու «Գևորգ Մարգարեանին» էի կարդում: Ձայն տվեց, իբր չլսեցի: Բարձրացավ, գիրքը մի կողմ նետեց ու բարկացած ավելացրեց. «Տեսնում ես, մի ձեռքով չեմ կարողանում, այն օգնիր»: Բարձրաձայն լաց եղա: Գրքի համար: Դարձյալ գրադարանավարուհուն ինչ պատասխանեմ: Երեկոյան քաշեց թևի տակ, շոյեց... Ճակատագիրն առավել դաժան էր վարվել, ու բնավ գրել, կարդալ չգիտեր: Երբ առաջին գիրքս լույս էր տեսել, առաջին օրինակն իրեն տարա: Թերթեց, սեղմեց կրծքին, հեծկլտաց. «Կներես, բալես, - ասաց, - այն տեղս շատ էր նեղ»:

Ես գիտեմ, որ ծնողները զավակներին առնչվող ոչինչ ու երբեք չեն մոռանում: Վաթսուն տարի անց «Հայաստան» պարբերականում իմ ավագ ընկերոջ ծնողների, ութ քույր և եղբայրների անցած ճանապարհի մասին նյութ էի տպագրել «Հայրս մի բան պիտի ասեր» խորագրի ներքո: «Համարը ձեռքիս մտա այգի, կարդացի ու անգուսպ արտասվեցի: Իմ բոլոր գրքերը ցուցադրված էին Հնարավորի մեր տան պահարանին: «Լյուդվիգս է գրել, - ներկայացրել է եկող-գնացողի՝ իմացա մի օր...»: Պատմեց ու նորից փոփոխեց՝ անսպաս հունորի մեջ իր փխրուն հոգին թաքցնել փորձող ընկերս: Հիմա երկնքի ճանապարհին է, ուր Հովակ և Հայկուհի ծնողներն են, տիկին Եվգենյան ու չսպիացող վերք Արմեն որդին, նաև նրանք, ովքեր դժվար ժամանակների բարի ուղեկիցները եղան. և առաջին հերթին՝ հանրապետության մանկական թերթի տակավին երիտասարդ խմբագիր Վարդգես Պետրոսյանը՝ օգնելով Եվին գյուղի դպրոցում նշանակում

ստացած մայրենի ուսուցչին՝ անցնելու լրագրողի, գրողի ու գրականագետի բնավ էլ ոչ հեշտ ճանաչման, միշտ մնալով սակայն մանկության բարի մոլորակի նվիրյալ տարեգիրը այնքան սիրելի «Պիոներ կանչ» թերթում, ուր նախորդ դարի 70-ականների վերջին «հանդգնել» ու խմբագրի բացակայությամբ մանկապատանեկան թերթի հերթական համարը հրատարակել էր «Հայապահպանության գործին եղիր պատրաստ» գլխագրով («Կոմունիստական գործի պայքարին եղիր պատրաստ» գլխագրի փոխարեն): Հենց այդ թերթում չորս տասնամյակ առաջ խաչվեցին մեր ճանապարհները, հետո, իր իսկ պնդմամբ, միասին սկսեցինք երկար մի ճանապարհի հանրապետության մանկավարժական «Սովետական դպրոց» թերթում: Միշտ անհանգիստ և ամեն նորի ջատագով, խենթորեն համարձակ, ժողովրդասերական հերթական հեղաշրջումը սկսեց: Վստահեցնում եմ առաջինը ողջ խորհրդային երկրում փաստի առաջ կանգնեցնելով հանրապետության 1980-ականների վերջի նորանշանակ ղեկավարին: «Արի թերթի անունը փոխենք, - ասաց, - առաջարկներ ներկայացրո՞ւ»: Օրեր անց թերթի բոլորովին նոր և հիմնովին թարմ ձևավորմամբ համարը հասավ ընթերցողին «Դպրություն» խորագրով, իսկ ամենավերևում «աննկատ» բազմել էր գլխավոր տողը հայ մանկավարժին հասցեագրվող թերթում Սողոմոնի առակներից հայերեն թարգմանված առաջին նախադասությունը. «Ճանաչել գիմաստություն և գիբաստ, իմանալ զբանս հանճարոյ»: Խորհրդային մամուլի անխտիր բոլոր թերթերի ճակատին դրոշմված «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» տողի փոխարեն: Չորս ամիս անց, «աչալորջ» մեկի կողմից բարձրացված աղմուկն ավարտվեց կենտրոնում հարցի քննարկմամբ և նրանով, որ... սկսվեց այդ տողից հրաժարման գործընթացը ընդհանրապես մամուլի բոլոր միջոցներում: Հետո միասին էինք «Հայաստան» թերթում և «Հրաչյա Աճառյան» համալսարանում, անհունորեն սիրելի Հայաստան աշխարհի ամենատարբեր կրթական հաստատություններում ու բնակավայրերում, Հանքավանի ձորում, ուր ժամանակին թողում էր հայ երեխաների երգը, իսկ ճամբարային ռումանտիկ գործերի մասին պատմությունները դառնում էին մամուլի շքեղ հրապարակումներ իր սիրուն ու սահուն գրչի ներքո: Զուգահեռ՝ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, «Դասը վարում է գրողը» չորսհատորյակը՝ ընդհանուր 80 մամուլ կամ շուրջ 1300 գրքային էջ ծավալով, մի քանի տասնյակ գեղարվեստական ակնարկներ, հրապարակախոսական հոդվածներ, որ ամբողջացվեցին բազմաթիվ գրքերում, լրագրության ձեռնարկներ, սրա-նրա «գլխին սարքած» հունորենկներից մինչև... իր իսկ մահախոսականը գրելը, որ ինքն իր համար կարդացել էր երթողայինում ու այնպես հուզվել, որ արժանացել էր բանից անտեղյակ մարդկանց կարեկցանքին: «Ինքս ինձ հարցրի՞, էսքան բան երբ եմ հասցրել ու ակամա փլվեցի»՝ պատմեց հաջորդ օրը՝ համարյա վստահ պնդելով, որ իր «արկածներին», հունորենրի ու «գաղտնիքներին» մասին առանձին թղթապանակ ունեմ... Մի օր իր (նաև բոլորիս) սիրելի Վախթանգ Անանյանի խոսքն հիշեց. «Ամեն գնացողի հետ աշխարհը մի քիչ ցրտում-սառում է»:

...Թե իմանայիր՝ որքան ցուրտ ու սառն էր ապրիլի երեսունի առավոտը...

Տիգրան ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀՈԳԻԳ ԼՈՒՅՍԵՐԻ ՄԵՋ ՃԱԽԻՐԻ

Ցավալի կորուստ ունեցանք: Կյանքին հրաժեշտ տվեց մեր սիրելի ընկերը՝ գրող, գրականագետ, բազմաթիվ գրքերի, գրական-մշակութային գրախոսությունների հոդվածների հեղինակ Լյուդվիգ Կարապետյանը: Վերջին տարիներին ծանր հիվանդությունը հաղթահարելով՝ իրեն բնորոշ հետևողականությամբ շարունակում էր փորձառու, հմուտ գրականագետի գործը: Իր աշխատասիրությամբ, սկզբունքային դիրքորոշումով Լյուդվիգ Կարապետյանը տարիներ շարունակ եղել է բանասիրական գիտությունների դոկտորին պատիվ բերող վաստակաշատ մտավորականի առաջապահ դիրքերում: Մանկավարժության, գիտության, մշակույթի վաստակաշատ նվիրյալներից էր Լյուդվիգ Կարապետյանը: Նրա հետ մեր ընկերությունն ու բարեկամությունը սկսվել է «Ավանգարդ» երիտասարդական թերթում աշխատելու տարիներից:

Ուշագրավ ու հիշարժան են նրա հիսունից ավելի գեղարվեստական, գրաքննադատական գրքերը, լրագրական հրապարակումները: Երախտապարտ եմ, որ իմ լավ ընկերը «Բաց նամակներ հասցեագրված գրողին և իր ընթերցողներին»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼԸ

Մրտի ցավով ու կսկիծով լսեցի իմ ավագ ընկերոջ ու բարեկամի՝ անվանի գրականագետ, մանկավարժ ու լրագրող, հրապարակախոս ու հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լյուդվիգ Կարապետյանի մահվան լուրը: Այս տարվա փետրվարին, երբ նրան նվիրեցի իմ «Մատյան երջանկության, տիեզերքի 7 հրաշալիքները» նոր հրատարակված գիրքը, ասաց. «Մամվել ջան, ինձ մնացել է մի քանի ցերեկ, մի քանի գիշեր»...

Ծանր հիվանդ էր, բայց կարողացավ գրել, «Գրական թերթում» հրապարակել իմ գրքի մասին իր գրախոսականը: 2022-ին անվա-

Հիմա հոգիդ սիրասուն մայրիկիդ գրկում է, այնտեղ՝ արյան քո կանչերով հեռացած՝ աստղաշար հարազատներիդ սրբալույս խորաններում ես՝ Լյուդվիգ՝ մեծ հայրդ: Քեզ ճանաչող ապրողներին, իրավ, դու պարտք չմացիր, ոսկե գրիչդ հոգուդ լուսավոր փայլերով շողողաց ամենուր, խարսխվեց ճշմարտության գույներին, դարձավ մաքրամաքուր գնահատումների ավետիս ու աղոթք, գուրգուրանք՝ ազնիվ գրին ու գրքին, փառաբանում՝ Հայոց և աշխարհի մեծերին նվիրված բազմապատում արարումներին:

Լյուդվիգն իր անունը թողեց նաև Հայաստանի Յոթ երգերին նվիրակ՝ հրաշաբույր աղոթքների

խորագրով գրել է նաև «Արևշատ Ավագյանի տիեզերական աշխարհը» գիրքը:

Հոգիդ լույսերի մեջ ճախրի, իմ գրչակից ընկեր Լյուդվիգ Կարապետյան: Դու գնացիր՝ լրացնելով մեր մշակույթի անմահների շարքերը, թողնելով այն մեծ, հարուստ ժառանգությունը, որը մնայուն է, կրթելու և դաստիարակելու է ներկա ու գալիք սերունդներին, ընթերցողներին իր մշտանոր անհրաժեշտ գիտելիքով, հարուստ ու արժեքավոր բովանդակությամբ:

Արագած աշխարհում գտնվող քո ծննդավայր Հնարեղ գյուղում, քո անունը կրող գրադարանում, մեր մտքում, հիշողության մեջ մնալու են քո անցած կյանքի կապույտ արահետները, դեպի գալիք գնացող գրքերը, թերթերը, հուշերն ու հիշատակումները, մնալու են և ներկա ու գալիք սերունդներին են փոխանցելու քո ապրած կյանքի անմոռաց հիշատակումները, գրքերը, որոնցից մեկը կոչվում է «Արևշատ Ավագյանի տիեզերական աշխարհը»: Դու, ես, մեր բազմադարյան արվեստի բոլոր նվիրյալներն անցել ու անցնելու են դեպի կյանք տանող հիշատակների աշխարհով: Դու այդ հիշատակների երկրի բնակիչներից ես լինելու, իմ թանկագին ընկեր Լյուդվիգ Կարապետյան...

Արևշատ ԱՎԱԳՅԱՆ

նի գրականագետը հրատարակեց «Մամվել Մարգարյան. հայրենախոս բանաստեղծը» գիրքը, ուր ներկայացրեց իմ քննարկության համապատկերը:

Արագած լեռան վեհությունը, լեռնաձաղիկների բուրմունքը կար նրա հոգում, անսահման բարի էր, գթառատ, ուրախանում էր մեր գրողների արժեքավոր ստեղծագործություններով և խրախուսում էր նրանց, կանաչ ճանապարհ հարթում երիտասարդ, շնորհալի գրողներին: Գրականության, մշակույթի ճշմարիտ նվիրյալ էր ու ջատագով: Հրատարակեց ավելի քան 50 գիրք:

Թող Աստված խաղաղություն պարգևի նրա հոգուն, և աստղալույսը հարասուն լինի նրա շիրիմին:

Մամվել

ՄԱՐԳԱՐՅԱՆ

շքավոր շարքերում և գնաց հավերժություն:

Հավերժ հիշատակ, փառք ու խոնարհում հայոց գրական մտքի վաստակաշատ նվիրյալ, բանասիրական գիտությունների դոկտոր Լյուդվիգ Կարապետյանին:

Այս թանկ և անդառնալի կորստի կապակցությամբ մեծ վշտով և խորապես ցավակցում եմ բոլոր հարազատներին, նրան ճանաչողներին, գործընկերներին: Աստված հոգին լուսավորի:

Խոնարհ հարգանքներս, ազնվագույն մեծ հայ, պատվարժան քաղաքացի և անգուգական բարեկամ:

Ռաֆայել ՍԱՀԱԿՅԱՆ

IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM IN MEMORIAM

ՄԵԼՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Կյանքից հեռացավ վաստակաշատ լրագրող, բանաստեղծ և արձակագիր, Տաշիրում «Լոռու մարզ» թերթի երկարամյա թղթակից Մելս Բաղդասարյանը:

Ծնվել է 1946 թ. մայիսի 15-ին, Տաշիրի տարածաշրջանի Մեծավան գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել էր ԴՀ-ի բանասիրական ֆակուլտետը՝ հեռակա ուսուցմամբ: 1964-1970 թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է Կալինինոյի (այժմ՝ Տաշիր քաղաք) նորաբաց շրջանային «Արևածագ» թերթի խմբագրությունում՝ սկզբում որպես սրբագրիչ, ապա՝ գրական աշխատող, բաժնի վարիչ: 1970-1992 թթ. աշխատել է որպես շրջանային ռադիո-հաղորդումների խմբագիր: 1992-1996 թթ. եղել է Տաշիրի շրջալրագրի մշակույթի բաժնի վարիչ: 1997-2000 թթ. աշխատել է Տաշիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում՝ որպես փախստականների գծով տեսուչ: Տարիներ շարունակ Մ. Բաղդասարյանը եղել է Տաշիրի քաղաքապետի խորհրդակալ:

1971-ից Հայաստանի ժողովրդական միության անդամ էր, 2005-ից՝ Ռազմածովագիրների միջազգային ընկերության, 2007-ից՝ ՀԳՄ անդամ:

Ծանրակշիռ է Մ. Բաղդասարյանի գրական վաստակը: Հրատարակել է «Միրո անուրջներ» (1992 թ.), «Բարի լույս, սեր» (1996 թ.), «Դեռ ծարավ եմ քեզ» (1999 թ.), «Խաչված հեքիաթներ», «Լույս եմ փնտրում» (2003 թ.), «Կինը գովք է» (2007 թ.), «Ու անունդ դրեցի սեր» (2010 թ.), «Մասնա ծուռ եմ» (2011 թ.), «Փրկիր ինձ, Հիսուս» (2012 թ.), «Միրաշատ երագ», «Ծոցդ սիրուս լուսաբաց է» (2014 թ.), «Միրո կամուրջ» (2016 թ.), «Սպասիր ինձ» (2019 թ.), «Հույսի արարում» (2020 թ.), «Հուշապատում» (2023 թ.) բանաստեղծական ժողովածուները, Արցախի հերոսամարտին նվիրված «Մխրանքի և փառքի ճանփաներով» (2005 թ.), ինչպես նաև՝ «Հայրենապատում. Շահնագար» (2007 թ.), «Դիմանկար հոգու և խղճի թելադրանքով» (2014 թ.), «Միխայիլովկա. Պատմական ակնարկ» (2017 թ.) արձակ գրքերը:

Մ. Բաղդասարյանը նաև հրապարակախոսական մի շարք հոդվածների հեղինակ է, որոնք տպագրվել են մամուլում ու տարբեր գրքերում:

Վաստակաշատ գրողին, անկեղծ, բարի ու իր հայրենիքին նվիրված անձնավորությանը դեռ երկար կհիշեն լրագրողական և գրական աշխարհում:

ՀԳՄ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հազար տարի հետո, եթե նորից պիտի աշխարհ գամ, Կուզեմ միայն Հայաստանում էլի ես հայ աշխարհ գամ. Այնժամ հաստատ Հայաստանը ծովից ծով է լինելու - Երևել իղձս իղձ չմնա, երբ էլ կրկին աշխարհ գամ...

Դուռը բաց է, եկեք, ինչ ունեմ ու չունեմ, Հավաքեմ ու ձեզ տամ անմասնորդ, Միայն կարիքի մեջ դուք չմնաք, Միայն տունս մտնի ամեն անցորդ: Դուռը բաց է, եկեք, ես ձեզ կաթիլ-կաթիլ Շիթ-շիթ արցունքս տամ՝ գուլալ-գուլալ: Դուք այն ինձնից տարեք ծարավ այն հավքերին, Ու վարդերին տարեք, որ չմնան ծարավ: Եկեք, աչքերս տամ՝ ձեր լույսն առատ լինի, Մութը վանեմ ձեզնից հեռու-հեռու, Դեռք է՝ սիրտս էլ տամ՝ թող ձեր ցավը տանի, Միայն թե ոչ մի սիրտ թող չցավի:

Քո ցերեկը ինձ հետ կապող Միակ ճամփան կարոտն է իմ, Իմ տենչերի, իմ կանչերի Միակ վկան արցունքն է իմ: Մտքիս ձեռքը քեզ գորգորող, Մտքիս շուրթը քեզ համբուրող, Մտքիս տենչը ծոցդ մտնող Միակ վկան, անխ, միտքն է իմ... Քո գիշերը ինձ հետ կապող Միակ ճամփան երագն է իմ, Հուշեր բերող, հուշեր տանող Միակ ճամփան երագն է իմ...


Ամեն մեկդ մի պայծառ լույս, Ամեն մեկդ հավատ ու հույս, Ամեն մեկդ մի տան ճրագ, Ամեն մեկդ մի տան կրակ, Ամեն մեկդ արծիվ հայոց, Թշնամու դեմ դարպաս եք գոց: Բայց ինչ օգուտ, բայց ինչ օգուտ, Որ հեռու եք հայրենիքից, Որ, անխ, չունեք կարոտ ու գուր, Որ թողել եք ձեր տունը փակ, Որ թողել եք անհիշատակ Ու օտարի լուծն եք քաշում, Հայոց լեզուն եք մոռանում Ու վանքեր եք հեռվում շինում Ու թողնում եք մեր Վանքն ավեր Ու մեր Տունը, անխ, բնավեր... Լեզվով սիրում, կարոտում եք, Պաշտպանում եք մինչև անգամ, Գործով, սակայն, հեռանում եք, Հեռանում եք մեղք ու անկամ... Ախ, երբ պիտի դուք ետ դառնաք, Որ շենանա երկիրը մեր, Որ թշնամու սրտին դառնաք Մութ ու ավեր...

գրական անցուդարձ գրական անցուդարձ

«ՊՈՆԶԻԱ» ՏԱՐԵԳՐՔ-2

Մայիսի 2-ին ՀԳՄ կրթ սրահում տեղի ունեցավ «Պոնզիա» տարեգրքի շնորհանդեսը: Այն երկրորդ տարեգրքն է, առաջինը լույս է տեսել 2024 թ.-ին: Տարեգրքի նախագծի հեղինակներն են Էդվարդ Միլիտոնյանը և Ավիլ Դերենցը: Գիրքը տպագրվել է «Ծիծեռնակ» հրատարակչությունում: Ժողովածուն ամփոփում է ժամանակակից 58 հեղինակների նոր բանաստեղծություններ և թարգմանություններ: Ընդգրկված են բանաստեղծներ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից: Ժողովածուում առանձին մաս է հատկացված 2024 թ.-ի ընթացքում տեղի ունեցած մրցանակաբաշխություններին, գրական համագործակցություններին, միջազգային հանդիպումներին, հորեյաններին, ինչպես նաև տպագրված գրքերին: ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը ներկայացրեց գիրքը և խոսեց նախագծի մասին՝ ասելով, որ տարեգրքի տպագրությունը կլինի շարունակական: «Տարեգրքի նպատակն է ներկայացնել ժամանակակից բանաստեղծների ստեղծագործության բազմազանությունը: Բովանդակությունը փոփոխական է, կան ոչ միայն բանաստեղծություններ, այլև պոեզիայի վերա-

բերյալ հոդվածներ ու հարցազրույց»,- նշեց նա: «Ծիծեռնակ» անսագրի խմբագիր Անուշ Վարդանյանն ասաց. «Գիրքը նորովի է պատկերում հայ գրականության հիմնական թեմաները: Ներկայացված են արցախցի բանաստեղծներ, որոնք իրենց գույնն են ավելացնում մեր ժամանակակից գրականությանը: Կարևոր դեր ունեն նաև սփյուռքահայ բանաստեղծները»:



Ելույթ ունեցան և գրքից բանաստեղծություններ ընթերցեցին Կորյուն Առաքելյանը, Եսթերը, Ալիսա Բաղդասարյանը, Շուշանիկ Թամրազյանը, Անահիտ Ասատրյանը, Մարիամ Սարգսյանը, Զա-



րինե Սառաջյանը և Հերմինե Նավասարդյանը: Հեղինակները խոսեցին նման ժողովածուների հրատարակման կարևորության մասին՝ ասելով, որ դրանք օժանդակում են ժամանակակից գրականության ընթերցանությանը, միայնաց ճանաչողությանը, և շնորհակալություն հայտնեցին տպագրության համար:

Սևի. լրպ.

ՉԱՏԿԱԿԱՆ ՆՎԵՐ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ



«ԳՐՈՂՆԵՐ» անվանումով Լեհաստանի խոշորագույն գրական-գեղարվեստական էլեկտրոնային հրատարակչությունը, որ իր մշտական ներկայացուցչություններն ունի Իտալիայում և Մեծ Բրիտանիայում, մեկուկես տասնամյակ շարունակ, երկշաբաթյա պարբերականությամբ, լեհ ընթերցողին նմուշներ է ներկայացնում արդի համաշխարհային գրականությունից:

Հրատարակչություն, տեսական խնդիրներ, պոեզիա, արձակ, թատրոն և այլ բաժինների շարքում ուշագրավ է հատկապես «Գիրքը մանրադիտակի տակ» խորագիրը, որի ներքո անվանի գրող-գրականագետների, մշակութաբանների հոդվածները, քննարկումներն ու բանավեճերը իրենց կարևոր նպաստն են բե-

րում մերօրյա գրական արժեքների հանրահռչակմանը և, իհարկե, ընթերցողական ճաշակի ուղղորդմանը:

Հրատարակչությունը օրերս, Սուրբ գատկի տոնին նվիրված իր թողարկման մեջ, բանաստեղծուհի և գրաքննադատ Կալինա Իգարելա Զիոլայի թարգմանությամբ ներկայացրել է Գագիկ Դավթյանի՝ տարիներ առաջ Վարշավայում հրատարակված «Աստանդական սիրտը» գրքից ընտրված բանաստեղծությունների ծավալուն շարքը՝ կենսագրական հանգամանալի տեղեկություններով և լուսանկարով հանդերձ:

Հավելնք, որ այս հրատարակումը 15-ամյա էլեկտրոնային հրատարակչության առաջին անդրադարձն է հայ գրականությանը:

Սևի. լրպ.

Գրական Թերթ

Գլխավոր խմբագիր՝ Կարինե ԽՈՒԴԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նորայր Ադալյան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Աելիտա Դոլովանյան, Ազատ Եղիազարյան, Գորգեն Խանջյան, Մամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրայր Մարիբեկյան:

Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ-ն:

Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175:

Ծավալ՝ տպ. 2 մամուլ:

Տպաքանակ՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արդյապարհած փեռնակներին: Արվարակության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ն՝ ՀԳՄ «Լ. Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» փապարաբարը:

0019 երևան 19, Մարշալ Բաղդասյան պող. 3, էլ. փոստ՝ grakantert@gmail.com